ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N342-Ա որոշման 2-րդ կետը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևան, Կենտրոն Արամի փողոց 72, 74, 76 հասցեներում գտնվող բազմաֆունկցիոնալ շենքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N09042013-01-0054 վկայական/ ներդնել Երևան, Ծիծեռնակաբերդի 1/2 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ անավարտ շենքի սեփականատեր «Դի Ընդ Էյջ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում, կնքելով անշարժ գույքի ներդրման և ներդրումից ստացված բաժնեմասերի շնորհի պայմանագրեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 342-Ա որոշման 1-ին կետով հաստատված «Երևան քաղաքի Արամի փողոցի 72-80 հասցեներում ձախողված կառուցապատման ծրագրից տուժած անձանց գույքային կորուստների վերականգնման» ծրագրի 22-րդ կետով սահմանված հիմնական պայմաններով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման ընդունման նպատակը ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 342-Ա որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի Արամի փողոցի 72-80 հասցեներում ձախողված կառուցապատման ծրագրից տուժած անձանց գույքային կորուստների վերականգնման» ծրագրի կատարման ապահովումն է:

ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևան, Կենտրոն Արամի փողոց 72, 74, 76 հասցեներում գտնվող բազմաֆունկցիոնալ շենքը ներդնել Երևան, Ծիծեռնակաբերդի 1/2 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ անավարտ շենքի սեփականատեր «Դի Ընդ Էյջ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում, կնքելով անշարժ գույքի ներդրման և ներդրումից ստացված բաժնեմասերի շնորհի պայմանագրեր:

Նշված պայմանագրերի կնքման արդյունքում կկարգավորվի Երևան քաղաքի Արամի փողոցի 72-80 հասցեներում ձախողված կառուցապատման ծրագրից տուժած անձանց գույքային կորուստների վերականգնման հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ